ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱԱՊՁԲ-4/29-1

ք. Երևան 29 .11.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Մաթևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 17791440 (տասնյոթ միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում

է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ժակ և Գոռ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Հրազդան, Կենտրոն թաղ., 19/40
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Հրազդան մ/ճ
Հ/հ 900011144079	Հ/Հ 163158129250
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 03012667
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Լ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
Ն ՀՄԱԱՊՁԲ-4/29-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չ/Հ	Անվանումը	Տեխնիկական ցուցանիշներ	
2	Գլանների իրանի գլխիկ	406.1003007-40	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
14	Կցորդման սկավառակ սեղմող	4173-1601090	ՈՒԱԶ մեքենայի, Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
15	Կցորդիչի գլխավոր գլան	469-1602300	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
16	Կցորդիչի բանվորական գլան	469-1602510	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
17	Շրջադարձի հոդակապ աջ	469-2304060	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
19	Շրջադարձի հոդակապ աջ	31605-2304060	ՈՒԱԶ Հանտեր մեքենայի, Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
20	Շրջադարձի հոդակապ ձախ	31605-2304061	ՈՒԱԶ Հանտեր մեքենայի,Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
21	Կանրջակի գլխավոր փոխանցման ատամնանիվ հավաքական	3741-2402020 37ատամ	Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
22	Կանրջակի գլխավոր փոխանցման ատամնանիվ հավաքական	3160-30-2402020	Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
23	Հարվածամեղմիչ	3151-2905006	Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
28	Արգելակման սկավառակ	3160-3501076	Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
30	Մեկնարկիչ հավաքական	422..3708000	Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
32	Գեներատոր	6631.3701-01	14Վ, 55Ա, 770Վտ նոր օրինակի, փոկանիվը 2 փոկի տեղով, Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
34	Վառոցքի մոմ A-11	CH433-3707000	Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
35	Հետևի ռեսոր հավաքական	31512-2912010	ՈՒԱԶ մեքենայի, Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
36	Հետևի ռեսոր հավաքական	2360-2912010	ՈՒԱԶ Հանտեր մեքենայի, Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
40	Ռեակտիվ ձգաձողի վռան	3160-2909029	ՈՒԱԶ Խանտեր Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
42	Ղեկային ուժեղարարի յուղի մղիչ Գազ-33081	ՀՍ-10	ՀՍ-10Ж-3-04 Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
44	Ջրի մղիչ հավաքական	66-1307010	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
47	Տուրբոմղիչ հավաքական	TKP-6.1, 600-1118010	Գազ-33081 մեքենայի, Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
52	Գեներատոր	5101.3701-01	28Վ. 35Ա. փոկանիվը 2 փոկի տեղով, Դ-245 շարժիչների համար: Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
53	Մեկնարկիչ հավաքական	66-3708000	СТ-130-Б Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
58	Փոխանցման տուփի առաջին աստիճանի ատամնանիվ	52-1701110-30	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
60	Փոխանցման տուփի երկրորդ աստիճանի ատամնանիվ	52-1701111	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
61	Վառելիքի բաք	66-1101010	Գազ-66 մեքենայի, Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
62	Բաժանարար տուփի առաջնային լիսեռ	66-40-1802025	ԳԱԶ-33081 մեքենայի, Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
65	Հիդրովակումային ուժեղարար	53-3550010	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
68	Հովացուցիչ	ВК-66-1301006	Գազ-66 մեքենայի, 4 շետանոց պղնձե: Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
69	Հովացուցիչ	3307-1301010-91	4 շետանոց պղնձե, Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
70	Ծնկաձև լիսեռ	236-1005009-Д	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
71	Ծնկաձև լիսեռ	238-1005009	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
76	Մեկնարկիչ	24В AZF 4581	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
79	Գեներատոր	Г288А-3701000	Г288А, Մակնիշավորումը գործարանային, Գործարանային փաթեթավորմամբ
81	Ջույգ սուզակային հավաքական	60-1111074	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
82	Բոցամուղ հավաքական	26.111201	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
83	Հովացման համակարգի պոմպ	236-1307010-А	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ
84	Հովացուցիչ	256Б-1301010	Մակնիշավորումը գործարանային,Գործարանային փաթեթավորմամբ

Ծանոթություն՝
-Բնութագրերում նշված «Մակնիշավորումը գործարանային» և «փաթեթավորումը գործարանային» դիտարկել արտադրող գործարանի կողմից նախատեսված չափանիշները:
-Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
-Ապրանքները պետք է հանձնվեն ԱԾ կենտրոնական պահեստ (Եղվարդ զինական):
-Ապրանքները չեն հանդիսանում հիմնական միջոց:
Պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Գումարը /ՀՀ դրամ/	Գնման ժամանակացույց
						2019թ. չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ 05.12.2019թ.
2	Գլանների իրանի գլխիկ	հատ	2	295000	590,000	2
14	Կցորդման սկավառակ սեղմող	հատ	6	24800	148,800	6
15	Կցորդիչի գլխավոր գլան	հատ	10	6600	66,000	10
16	Կցորդիչի բանվորական գլան	հատ	10	4750	47,500	10
17	Շրջադարձի հոդակապ աջ	հատ	4	38200	152,800	4
19	Շրջադարձի հոդակապ աջ	հատ	4	36200	144,800	4
20	Շրջադարձի հոդակապ ձախ	հատ	4	36200	144,800	4
21	Կանրջակի գլխավոր փոխանցման ատամնանիվ հավաքական	հատ	6	33000	198,000	6
22	Կանրջակի գլխավոր փոխանցման ատամնանիվ հավաքական	հատ	6	54150	324,900	6
23	Հարվածամեղմիչ	հատ	30	7500	225,000	30
28	Արգելակման սկավառակ	հատ	6	10350	62,100	6
30	Մեկնարկիչ հավաքական	հատ	6	34800	208,800	6
32	Գեներատոր	հատ	6	34900	209,400	6
34	Վառոցքի մոմ A-11	հատ	600	390	234,000	600
35	Հետևի ռեսոր հավաքական	հատ	16	28400	454,400	16
36	Հետևի ռեսոր հավաքական	հատ	16	37900	606,400	16
40	Ռեակտիվ ձգաձողի վռան	հատ	160	1600	256,000	160
42	Ղեկային ուժեղարարի յուղի մղիչ Գազ-33081	հատ	6	15000	90,000	6
44	Ջրի մղիչ հավաքական	հատ	8	12400	99,200	8
47	Տուրբոմղիչ հավաքական	հատ	6	154000	924,000	6
52	Գեներատոր	հատ	10	39800	398,000	10
53	Մեկնարկիչ հավաքական	հատ	10	38800	388,000	10
58	Փոխանցման տուփի առաջին աստիճանի ատամնանիվ	հատ	4	23000	92,000	4
60	Փոխանցման տուփի երկրորդ աստիճանի ատամնանիվ	հատ	5	22000	110,000	5
61	Վառելիքի բաք	հատ	6	76000	456,000	6
62	Բաժանարար տուփի առաջնային լիսեռ	հատ	6	45590	273,540	6
65	Հիդրովակումային ուժեղարար	հատ	6	36600	219,600	6
68	Հովացուցիչ	հատ	8	178000	1,424,000	8
69	Հովացուցիչ	հատ	12	89400	1,072,800	12
70	Ծնկաձև լիսեռ	հատ	2	872000	1,744,000	2
71	Ծնկաձև լիսեռ	հատ	2	1070000	2,140,000	2
76	Մեկնարկիչ	հատ	4	139000	556,000	4
79	Գեներատոր	հատ	8	53800	430,400	8
81	Ջոյգ սուզակային հավաքական	հատ	60	4500	270,000	60
82	Բոցամուղ հավաքական	հատ	24	10600	254,400	24
83	Հովացման համակարգի պոմպ	հատ	8	41600	332,800	8
84	Հովացուցիչ	հատ	7	349000	2,443,000	7

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Ժակ և Գոռ» ՍՊԸ

Տնօրեն

Լ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ՀՄԱԱՊՁԲ-4/29-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ. ընդ որում՝		
				նոյեմբեր	դեկտեմբեր
2	Գլանների իրանի գլխիկ	34911150/503/14/1		590,000	590,000
14	Կցորդման սկավառակ սեղմող	34911150/534/14/1		148,800	148,800
15	Կցորդիչի գլխավոր գլան	34911150/535/14/1		66,000	66,000
16	Կցորդիչի բանվորական գլան	34911150/536/14/1		47,500	47,500
17	Շրջադարձի հոդակապ աջ	34911150/537/14/1		152,800	152,800
19	Շրջադարձի հոդակապ աջ	34911150/539/14/1		144,800	144,800
20	Շրջադարձի հոդակապ ձախ	34911150/540/14/1		144,800	144,800
21	Կանրջակի գլխավոր փոխանցման ատամնանիվ հավաքական	34911150/541/14/1		198,000	198,000
22	Կանրջակի գլխավոր փոխանցման ատամնանիվ հավաքական	34911150/542/14/1		324,900	324,900
23	Հարվածամեղմիչ	34911150/543/14/1		225,000	225,000
28	Արգելակման սկավառակ	34911150/548/14/1		62,100	62,100
30	Մեկնարկիչ հավաքական	34911150/550/14/1		208,800	208,800
32	Գեներատոր	34911150/552/14/1		209,400	209,400
34	Վառոցքի մոմ A-11	34911150/554/14/1		234,000	234,000
35	Հետևի ռեսոր հավաքական	34911150/555/14/1		454,400	454,400
36	Հետևի ռեսոր հավաքական	34911150/556/14/1		606,400	606,400
40	Ռեակտիվ ձգածողի վռան	34911150/560/14/1		256,000	256,000
42	Ղեկային ուժեղարարի յուղի մղիչ Գազ-33081	34911150/562/14/1		90,000	90,000
44	Ջրի մղիչ հավաքական	34911150/564/14/1		99,200	99,200
47	Տուրբոմղիչ հավաքական	34911150/567/14/1		924,000	924,000
52	Գեներատոր	34911150/572/14/1		398,000	398,000
53	Մեկնարկիչ հավաքական	34911150/573/14/1		388,000	388,000
58	Փոխանցման տուփի առաջին աստիճանի ատամնանիվ	34911150/607/14/1		92,000	92,000
60	Փոխանցման տուփի երկրորդ աստիճանի ատամնանիվ	34911150/580/14/1		110,000	110,000
61	Վառելիքի բաք	34911150/581/14/1		456,000	456,000
62	Բաժանարար տուփի առաջնային լիսեռ	34911150/582/14/1		273,540	273,540
65	Հիդրովակումային ուժեղարար	34911150/585/14/1		219,600	219,600
68	Հովացուցիչ	34911150/588/14/1		1,424,000	1,424,000
69	Հովացուցիչ	34911150/589/14/1		1,072,800	1,072,800
70	Ծնկաձև լիսեռ	34911150/590/14/1		1,744,000	1,744,000
71	Ծնկաձև լիսեռ	34911150/591/14/1		2,140,000	2,140,000
76	Մեկնարկիչ	34911150/596/14/1		556,000	556,000
79	Գեներատոր	34911150/599/14/1		430,400	430,400
81	Զույգ տուգակային հավաքական	34911150/601/14/1		270,000	270,000
82	Բոցամուղ հավաքական	34911150/609/14/1		254,400	254,400
83	Հովացման համակարգի պոմպ	34911150/603/14/1		332,800	332,800
84	Հովացուցիչ	34911150/604/14/1		2,443,000	2,443,000

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Տնօրեն

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Ժակ և Գոռ» ՍՊԸ

Է. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ՀՄԱԱՊՁԲ-4/29-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀՄԱԱՊՁԲ-4/29-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն